ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ
(Քաղաքացիական և քաղաքացիական դատավարություն)

1. Լրատվական գործակալության կայքէջում հրապարակվել է Ա-ի հարցազրույցը, որտեղ տեղ գտած արտահայտությունները՝ ուղղված Բ-ի հասցեին, Բ-ն գնահատել է զրպարտող: Լրատվական գործունեություն իրականացնողը հրաժարվել է տարածել հերքում կամ հրապարակել Բ-ի պատասխանը: Բ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ա-ի՝ խնդրելով պարտավորեցնել Ա-ին տվյալ գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում նույն կայքի միջոցով հրապարակայնորեն հերքել տեղագրված հարցազրույցի ընթացքում հրապարակված զրպարտություն համարվող փաստացի տվյալները, միաժամանակ խնդրել է Ա-ից բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում: Դատարանը հայցը բավարարել է մասնակի՝ 2.000.000 ՀՀ դրամ պահանջի մասով՝ կիրառելով միայն նյութական փոխհատուցման միջոցը:

Արդյո՞ք իրավաչափ է դատարանի կողմից միայն նյութական փոխհատուցման միջոցի կիրառումը:

1) Ոչ, քանի որ ոչ նյութական և նյութական փոխհատուցման միջոցներ կիրառելու պահանջներ ներկայացված լինելու պարագայում դատարանն իրավասու չէր կիրառել միայն նյութական միջոցը:

2) Այո, քանի որ դա բխում է դատարանի հայեցողական լիազորություններից:

3) Այո, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի, թե որ միջոցն է ավելի արդյունավետ և համաչափ:

4) Ոչ, քանի որ դատարանը պարտավոր էր հավասարապես կիրառել և՛ նյութական, և՛ ոչ նյութական փոխհատուցման միջոցը:

Մինչև ո՞ր պահը հայցվորը հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ կարող է ներկայացնել միջնորդություն.

ա) մինչև պատասխան ներկայացնելու ժամկետը լրանալը

բ) մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը

գ) մինչև նախապատրաստական փուլի ավարտը

դ) մինչև դատաքննություն սկսելը